



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԴԱԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱԳՈՒՅԻՉՆԵՐԸ

Չորեքշաբթի, 21 Յունուարի յետմիջօրէին, Ազգային Առաջնորդարան այցելեցին Դաւթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան ներկայացուցիչները՝ Տիար Վահիկ Ծատուրեան եւ Դոկտ. Օննիկ Հայրապետեան եւ ընդունուեցան Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ:

Հանդիպումը տեղի ունեցաւ Ազգ. Առաջնորդարանին մէջ եւ առիթ ծառայեց Հաստատութեան ներկայ աշխատանքներուն ծանօթացման: Դաւթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան ներկայացուցիչները յայտնեցին, թէ յառաջիկայ Մայիս 17-ին կը ծրագրեն թելեթոն մը կազմակերպել:

Առաջնորդ Սրբազանը գնահատանքով արտայայտուեցաւ հաստատութեան նուիրեալ աշխատողներուն մասին եւ վերահաստատեց Ազգ. Առաջնորդարանի զօրակցութիւնը:

Յայտնենք, որ 20 տարի առաջ սահմանափակ պայմաններու մէջ սկսած Դաւթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան աշխատանքը այսօր զգալիօրէն ծաւալած է. հաստատութիւնը հայերէն լեզուի, մշակոյթի ու մարզախաղերու դասընթացքներ կը կիրարկէ պետական վարժարաններ յաճախող հայ աշակերտներու համար:

### PRELATE WELCOMES DAVIDIAN & MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION REPRESENTATIVES

On the afternoon of Wednesday, January 21st, the Prelate welcomed to the Prelacy representatives of Davidian and Mariamian Educational Foundation, Board Chairman Mr. Vahik Satorian and Academic Director Dr. Onnik Hairapetyan.

The guests briefed the Prelate on the recent and upcoming activities of the Foundation, specifically the Telethon scheduled for May 17<sup>th</sup>.

The Prelate commended the dedication of the Foundation members and once again affirmed the support of the Prelacy.

The Davidian and Mariamian Foundation, which was established two decades years, has witnessed tremendous growth over the years and today serves a large number of Armenian students in public schools.